ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2025 թվականի №-Ա

«ԳՈՒԴՔՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ) Հանձնաժողով է ներկայացվում տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) «ԳՈՒԴՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի 1-ին կիսամյակի Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի օգոստոսի 11-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը Ընկերության նկատմամբ 2025 թվականի հոկտեմբերի 3-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 3-ի №ՄՄ/34.2-Մ2-7/5489-2025 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջն, այն է՝

2025 թվականի 1-ին կիսամյակի Հաշվետվությունները (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի օգոստոսի 11-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

զ) Ընկերությունը մինչև 2024 թվականի մայիսի 25-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №5 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն, ներկայացրել է 2024 թվականի մայիսի 29-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2024 թվականի սեպտեմբերի 11-ի №303-Ա որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի սեպտեմբերի 14-ին և անբողոքարկելի է դարձել 2024 թվականի նոյեմբերի 15-ին, նախազգուշացրել է Ընկերությանը,

է) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կարգավորվող անձի կողմից կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը կատարելը կամ ոչ պատշաճ կատարելը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ դրա գործուղության դադարեցում, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2025 թ.